

ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ՎԱՐԿԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N

Ք.

_____Ք

«ԲԼԵՍՍ» ունիվերսալ վարկային կազմակերպություն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (այսուհետ՝ Վարկատու), ի դեմս _____, ով գործում է Կանոնադրության հիման վրա, մի կողմից, և քաղաքացի _____ (այսուհետ՝ Վարկառու), մյուս կողմից (այսուհետ՝ Կողմեր), կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Պայմանագրի պայմաններին համաձայն Վարկատուն Վարկառուին կանխիկ միանվագ տրամադրում է _____ ԶԶ դրամ գումարի չափով սպառողական վարկ (այսուհետ՝ Վարկ), իսկ Վարկառուն պարտավորվում է վերադարձնել Վարկը, վճարել Վարկի օգտագործման համար տոկոսագումարներն ու սահմանված այլ վճարները՝ Պայմանագրով սահմանված չափով և ժամկետներում:

1.2. Վարկը տրամադրվում է _____ նպատակով:

1.3. Վարկի ամբողջությամբ վերադարձման ամսաթիվն է՝ _____Ք:

1.4. Վարկի վարկային կողմն է՝ _____: Վարկի տրամադրման նպատակով Վարկատուն սահմանված կարգով բացում է Վարկի հաշվառման անհատական հաշիվ (այսուհետ՝ Վարկային հաշիվ): Վարկի տրամադրման ամսաթիվ է հանդիսանում Վարկատուի դրամարկղից և/կամ բանկային հաշվից (հաշիվներից) Վարկի գումարի ելքագրման ամսաթիվը: Վարկի, տոկոսագումարների, Պայմանագրով սահմանված այլ վճարումների մարման ամսաթիվ է հանդիսանում վճարային պարտավորությունների կատարման նպատակով Վարկառուի կամ երրորդ անձի կողմից դրամական միջոցների մուտքագրման ամսաթիվը Վարկատուի բանկային հաշվին և/կամ դրամարկղ:

1.5. Վարկի տրամադրման համար սահմանվում է միանվագ ծառայության վճար՝ _____ ԶԶ դրամի չափով:

1.6. Պայմանագրի կնքման օրը Վարկառուն կատարում է կրեդիտավորման հետ կապված այլ վճարներ՝ ընդամենը _____ ԶԶ դրամ գումարի չափով:

1.7. Վարկը տրամադրվում է տարեկան _____% դրույքաչափով (այսուհետ՝ Անվանական տոկոսադրույք), որն մնում է անփոփոխ Պայմանագրի գործողության ընթացքում՝ Պայմանագրով սահմանված ժամկետներում և չափով վարկի հետվճարումները կատարելու դեպքում: Վարկի օգտագործման համար տոկոսագումարների հաշվարկը սկսվում է Վարկի տրամադրման օրվանից և կատարվում է Վարկի փաստացի մնացորդի նկատմամբ: Տոկոսագումարները հաշվարկվում են Վարկի փաստացի օգտագործած օրացուցային օրերի համար՝ տարին ընդունելով 365 օր:

1.8. Վարկի տարեկան փաստացի տոկոսադրույքը (Annual Percentage Rate կամ APR) կազմում է _____%: Վարկի տարեկան փաստացի տոկոսադրույքը Վարկառուի վարկավորման ընդհանուր ծախսն է՝ արտահայտված տրամադրված վարկի ընդհանուր տոկոսով և հաշվարկված, հիմք ընդունելով «Սպառողական կրեդիտավորման մասին» ԶԶ օրենքի 13-րդ հոդվածում նշված բանաձևը: Վարկի տարեկան փաստացի տոկոսադրույքը հաշվարկվում է Պայմանագրի կնքման պահին, ենթադրելով, որ Պայմանագիրը գործելու է պայմանավորված ժամկետում և Կողմերը պատշաճ կերպով և պայմանավորված ժամկետներում կատարելու են Պայմանագրով ստանձնած պարտավորությունները: Վարկառուի վարկավորման ընդհանուր ծախսը այն բոլոր տոկոսներն ու այլ վճարներն են, որոնք Վարկառուն պարտավոր է վճարել վարկավորման համար: Վարկի տարեկան փաստացի տոկոսադրույքը ենթակա է փոփոխման, եթե փոփոխվում են Անվանական տոկոսադրույքը և/կամ վարկավորման համար կատարվող այլ վճարները: Վարկի տարեկան փաստացի տոկոսադրույքի փոփոխությունն ուժի մեջ է մտնում Վարկատուի կողմից Վարկառուին այդ մասին ծանուցելու օրվանից 10 (տաս) օրացույցային օր հետո:

1.9. Վարկառուի կողմից Վարկ ու հաշվարկված տոկոսագումարները վճարվում են Պայմանագրի Զավելվածում սահմանված չափով: Եթե Պայմանագրով (Պայմանագրի Զավելվածով) նախատեսված վճարման ամսաթիվը ոչ աշխատանքային օր է, ապա Վարկի գումարի և հաշվարկված տոկոսագումարների մարումը կատարվում է դրան հաջորդող աշխատանքային օրը: Վարկային պարտավորությունների մարումը իրականացվում է հավասարաչափ (անուիտետային) (ոչ հավասարաչափ (դիֆերենցված)) կարգով:

2. ՎԱՐԿԱՏՈՒԻ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԸ, ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Վարկատուն Վարկառուին երաշխավորում է հետևյալը.

2.1. Լիազորություններն ու իրավասությունները: _____

2.2. Օրինականացում: _____

2.3. Երաշխիքներ: _____

2.4. Վարկատուն պարտավորվում է՝ _____

2.5. Վարկատուն իրավունք ունի՝ _____

3. ՎԱՐԿԱՌՈՒԻ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԸ, ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Վարկառուն Վարկատուին երաշխավորում է հետևյալը.

3.1. Լիազորություններն ու իրավասությունները: _____

3.2. Օրինականագում: _____

3.3. Երաշխիքներ: _____

3.4. Վարկառուն պարտավորվում է՝ _____

3.5. Վարկառուն իրավունք ունի՝ _____

4. ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԽԱՆՏՈՒՄ

4.1. Պայմանագրի չկատարման կամ անպատշաճ կատարման, ինչպես նաև միմյանց հասցված վնասների համար, Կողմերը պատասխանատվություն են կրում ՉՀ օրենսդրությամբ և Պայմանագրով սահմանված կարգով:

4.2. Պայմանագրով սահմանված ժամկետներում Վարկը, դրա հերթական մասը և/կամ հաշվարկված տոկոսագումարները չմարելու դեպքում, չմարված Վարկի մնացորդը և/կամ հաշվարկված տոկոսագումարները համարվում են ժամկետանց:

4.3. Ժամկետանց Վարկի նկատմամբ դադարում է գործել Պայմանագրի 1.7. կետում նախատեսված տոկոսադրույքը և մինչև ժամկետանց վարկի փաստացի մարումը, դրա մնացորդի նկատմամբ հաշվարկվում են տոկոսներ՝ տարեկան _____% դրույքաչափով:

4.4. Պայմանագրով նշված ժամկետներում հաշվարկված տոկոսագումարները չվճարելու դեպքում չմարված տոկոսագումարների նկատմամբ սահմանվում է տույժ՝ յուրաքանչյուր ուշացած օրացուցային օրվա համար ժամկետանց տոկոսագումարի _____ %-ի չափով: Տույժերի հաշվեգրման համար հիմք է ընդունվում է օրացուցային օրերի փաստացի քանակը:

4.8. Վարկառուի կողմից Պայմանագրով սահմանված իր վարկային պարտավորությունների չկատարման, անպատշաճ կատարման դեպքում Վարկատուն առավելագույնը 8/ուժ/ աշխատանքային օր հետո Վարկառուի տվյալները (վարկային պարտավորությունների չկատարման, անպատշաճ կատարման մասին տեղեկությունները) ուղարկում է Վարկային բյուրո:

5. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ

5.1. Պայմանագիրը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է մինչև դրանով նախատեսված պարտավորությունների ամբողջական կատարումը:

6. ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼԸ

6.1. Պայմանագրում լրացումները և փոփոխությունները կատարվում են Կողմերի համաձայնությամբ (բացառությամբ Պայմանագրով նախատեսված դեպքերի)՝ գրավոր ձևով, որոնք Կողմերի ստորագրման պահից կհամարվեն Պայմանագրի անբաժանելի մասը:

7. ԱՆՀԱՂԱՅԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ ՄԱԺՈՐ)

7.1. Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության արդյունք, որը ծագել է Պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել և որը ենթակա չէ Կողմերի հսկողությանը: Պայմանագրի իմաստով անհաղթահարելի ուժ չեն համարվում գործադուլները, պարտավորությունների խախտումը Կողմերի գործընկերների (կոնտրագենտների) կողմից, դրամական միջոցների բացակայությունը և այն հանգամանքները, որոնք խախտող Կողմը կարող էր վերացնել ձեռնարկելով անհրաժեշտ միջոցներ:

7.2. Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է երեք ամսից ավելի (կամ երբ ակնհայտ է դառնում, որ նման իրավիճակը կամ դրա հետևանքները կշարունակվեն երեք ամսից ավելի), ապա Կողմերը պետք է անմիջապես բանակցություններ սկսեն անհաղթահարելի ուժի ազդեցության տակ հայտնված Կողմի համար հնարավոր ելք գտնելու նպատակով, ինչը վերջինիս թույլ կտա կատարել սույն Պայմանագրի ներքո ստանձնած իր պարտավորությունները:

8. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ

8.1. Պայմանագրի կատարման ընթացքում Կողմերի միջև առաջացած բոլոր վեճերը և տարաձայնությունները լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնության չգալու դեպքում վեճը լուծվում է ֆինանսական համակարգի հաշտարարի միջոցով՝ «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» ՉՀ օրենքին համապատասխան կամ ՉՀ օրենսդրությամբ սահմանված դատական կարգով: Ընդ որում, Պայմանագրի կնքման օրվա դրությամբ Վարկատուն Ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումները վիճարկելու իրավունքից հրաժարվելու վերաբերյալ համաձայնագիր չի կնքել:

9. ՎԱՐԿԱՏՈՒԻ ԵՎ ՎԱՐԿԱՌՈՒԻ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒՄԸ

9.1 «Սպառողական կրեդիտավորման մասին» ՀՀ օրենքի համաձայն, Վարկատուի և Վարկառուի միջև ցանկացած հաղորդակցում, որը կապված է Պայմանագրի պայմանների կամ Կողմերի միջև հաղորդակցման կարգի կամ Կողմերի իրավունքների, պարտականությունների կամ պատասխանատվության սահմանման, փոփոխման կամ դադարեցման հետ կամ վերաբերում է Պայմանագրի վրա որևէ ազդեցություն ունեցող օրենքներին, նորմատիվ իրավական ակտերին կամ Վարկատուի ներքին ակտերին (այսուհետ՝ պարտադիր ներկայացման տեղեկատվություն) կատարվում է գրավոր եղանակով՝ փոստային կապի միջոցով կամ Վարկառուի նախընտրած այլ եղանակներով, այդ թվում՝ Վարկատուի տարածքում առձեռն, էլեկտրոնային կամ կապի այլ միջոցներով ստանալու միջոցով:

10. ԾԱՆՈՒՑՄԱՆ ԿԱՐԳԸ

10.1. Կողմերը սահմանում են Պայմանագրով իրենց վերապահված իրավունքների և պարտականությունների իրացման մասին միմյանց ծանուցման հետևյալ կարգը. _____

11. ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ

11.1. Եթե Պայմանագրի որևէ կետ անվավեր, անգործուն, անիրագործելի կամ օրենսդրությանը չհամապատասխանող է ճանաչվում, ապա դա չի ազդում Պայմանագրի մյուս կետերի կիրառելիության վրա: Պայմանագրի որևէ կետ անվավեր կամ անիրագործելի ճանաչվելու դեպքում, Կողմերը համաձայն են անմիջապես համատեղ բանակցել բարյացակամության ոգով, փորձելով տվյալ կետը փոխել այնպես, որ այն դառնա կիրառելի և առավել հնարավոր չափով արտացոլի կողմերի սկզբնական նպատակը համապատասխան հարցի կամ հարցերի վերաբերյալ:

11.2. Պայմանագիրը և Պայմանագրում նախատեսած պայմանները ներառում են իրենց մեջ լիակատար համաձայնություն Կողմերի միջև և բոլոր Պայմանագրին նախորդող բանավոր կամ գրավոր պայմանավորվածությունների հանդեպ նախապատվություն ունեն:

11.3. Պայմանագրում նշված Կողմերի ներկայացումները, երաշխիքները և պարտավորությունները վավեր են լինելու Պայմանագիրը ստորագրելու պահից և կգործեն Պայմանագրի գործողության ամբողջ ընթացքում:

11.4. Վարկառուն սույնով տալիս է իր համաձայնությունը, որպեսզի Պայմանագրից ծագող կամ ծագելիք իր պարտավորությունների վերաբերյալ ցանկացած տեղեկատվություն Վարկատուն, առանց Վարկառուի լրացուցիչ համաձայնության, տրամադրի ՀՀ Կենտրոնական բանկի Վարկային ռեգիստրին և «ԱՔՌԱ Քրեդիտ Ռեփորթինգ» ՓԲԸ-ին, ինչպես նաև Պայմանագրի գործողության ընթացքում առանց Վարկառուին նախապես տեղյակ պահելու կատարի հարցում ՀՀ Կենտրոնական բանկի Վարկային ռեգիստրից և «ԱՔՌԱ Քրեդիտ Ռեփորթինգ» ՓԲԸ-ից և ստանա Վարկառուի վերաբերյալ վարկային զեկույցը:

11.5. Վարկառուն սույնով հայտարարում և հավաստիացնում է, որ ծանոթ է Պայմանագրի կնքման օրվա դրությամբ գործող Վարկատուի _____ վարկատեսակի պայմաններին

11.6. Պայմանագրին կից հավելվածները կազմում են նրա անբաժանելի մասը: Վարկի ապահովման միջոցների վերաբերյալ կնքված գրավի (երաշխավորության) պայմանագիրը (պայմանագրերը) կնքման պահից հանդիսանում են Պայմանագրի անբաժանելի մասը:

11.7. Պայմանագիրը կազմված և ստորագրված է 2 (երկու) իրավահավասար օրինակից՝ հայերեն լեզվով, յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկ օրինակ:

12. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ԱՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՎԱՐԿԱՏՈՒ

ՎԱՐԿԱՌՈՒ

թ. _____

_____թ

«ԲԼԵՍՍ» ունիվերսալ վարկային կազմակերպություն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (այսուհետ՝ Գրավառու), ի դեմս _____, ով գործում է Կանոնադրության հիման վրա, մի կողմից, և քաղաքացի _____ (այսուհետ՝ Գրավատու), և քաղաքացի _____ (այսուհետ՝ Պարտապան), մյուս կողմից (այսուհետ՝ Կողմեր), կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

- 1.1. Պայմանագիրը հանդիսանում է «ԲԼԵՍՍ» ունիվերսալ վարկային կազմակերպություն սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության և քաղաքացի _____ միջև _____թ-ին կնքված թիվ _____ վարկային պայմանագրի (այսուհետ՝ «Հիմնական պարտավորություն» կամ «Վարկային պայմանագիր») անբաժանելի մասը, որի համաձայն Վարկատուն Վարկառուին տրամադրում է _____ ՀՀ դրամի չափով վարկ, մինչև _____ ամբողջությամբ վերադարձման ժամկետով, տարեկան _____ դրույքաչափով: Վարկառուի կողմից վարկը վերադարձվում _____:
- 1.2. Պայմանագրի 1.1 կետով նախատեսված Հիմնական պարտավորության կատարման ապահովման համար Գրավատուն գրավ է դնում _____ (այսուհետ՝ Գրավի առարկա կամ Աճշարժ գույք):
- 1.3. Պայմանագրով ապահովվում է Հիմնական պարտավորության պահանջն այն ժամկետով, որն առկա է փաստացի բավարարման պահին, այդ թվում Վարկի գումարը, դրա նկատմամբ հաշվարկված տոկոսագումարներն ու սահմանված այլ վճարները, տույժը, պատճառած վնասի հատուցումը, գրավ դրված գույքը պահելու և պահպանելու, բռնագանձելու և իրացնելու հետ կապված ծախսերի հատուցումը:
- 1.4. Կողմերի համաձայնությամբ Գրավի առարկայի գրավադրման արժեքը սահմանվել է _____ ՀՀ դրամ:
- 1.5. Պայմանագիրը ենթակա է նոտարական կարգով վավերացման, իսկ Պայմանագրից ծագող իրավունքը՝ պետական գրանցման, որոնց հետ կապված ծախսերը կատարվում են Գրավատուի (Պարտապանի) կողմից:
- 1.6. Գրավի առարկան թողնվում է Գրավատուի օգտագործման ներքո:

2. ԳՐԱՎԱՌՈՒԻ ԵՐԱՇՆԻՔՆԵՐԸ, ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- Գրավառուն Գրավատուին երաշխավորում է հետևյալը.
- 2.1. Լիազորություններն ու իրավասությունները: _____
- 2.2. Օրինականացում: _____
- 2.3. Երաշխիքներ: _____
- 2.4. Գրավառուն պարտավորվում է՝ _____
- 2.5. Գրավառուն իրավունք ունի՝ _____

3. ԳՐԱՎԱՏՈՒԻ ԵՐԱՇՆԻՔՆԵՐԸ, ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- 3.1. Լիազորություններն ու իրավասությունները: _____
- 3.2. Օրինականացում: _____
- 3.3. Երաշխիքներ: _____
- 3.4. Գրավառուն պարտավորվում է՝ _____
- 3.5. Գրավառուն իրավունք ունի՝ _____

4. ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

- 4.1. Գրավատուն պատասխանատու է ՀՀ օրենսդրությամբ և Պայմանագրով ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:
- 4.2. Գրավատուի կողմից Պայմանագրով ստանձնած իր պարտավորությունների չկատարումը կամ անպատշաճ կատարումը հիմք է՝ Գրավառուի կողմից Պարտապանին (Վարկառուին) Հիմնական պարտավորության վաղաժամկետ ամբողջական մարման մասին պահանջ ներկայացնելու համար:

5. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ

- 5.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման, նոտարական կարգով վավերացման և պայմանագրից ծագող իրավունքի պետական գրանցման պահից՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և գործում է մինչև Պայմանագրի 1.1. կետում նշված Վարկային պայմանագրով նախատեսված պարտավորությունների ամբողջական կատարումը:

6. ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ

6.1. Պայմանագրում լրացումները և փոփոխությունները կատարվում են Կողմերի համաձայնությամբ՝ գրավոր ձևով, որոնք Կողմերի ստորագրման պահից կհամարվեն պայմանագրի անբաժանելի մասը:

7. ԱՆՀԱՂՁԱՅԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ ՍԱԺՈՐ)

7.1. Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության արդյունք, որը ծագել է Պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել և որը ենթակա չէ Կողմերի հսկողությանը: Պայմանագրի իմաստով անհաղթահարելի ուժ չեն համարվում գործադուլները, պարտավորությունների խախտումը Կողմերի գործընկերների (կոնտրագենտների) կողմից, դրամական միջոցների բացակայությունը և այն հանգամանքները, որոնք խախտող Կողմը կարող էր վերացնել ձեռնարկելով անհրաժեշտ միջոցներ:

7.2. Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է երեք ամսից ավելի (կամ երբ ակնհայտ է դառնում, որ նման իրավիճակը կամ դրա հետևանքները կշարունակվեն երեք ամսից ավելի), ապա Կողմերը պետք է անմիջապես բանակցություններ սկսեն անհաղթահարելի ուժի ազդեցության տակ հայտնված Կողմի համար հնարավոր ելք գտնելու նպատակով, ինչը վերջինիս թույլ կտա կատարել սույն Պայմանագրի ներքո ստանձնած իր պարտավորությունները:

8. ԳՐԱՎ ԴՐՎԱԾ ԳՈՒՅՔԻ ՎՐԱ ՍՈՒՆՑ ԴԱՏԱՐԱՆ ԴԻՄԵՆՈՒ ԲՈՆԱԳԱՆՁՈՒՄ ՏԱՐԱԾԵԼՈՒ ԵՎ ԻՐԱՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ

8.1. Գրավառուն Պայմանագրի 1.1. կետում նշված Վարկային պայմանագրով իր պահանջի բավարարման նպատակով իրավունք ունի առանց դատարան դիմելու Գրավի առարկայի վրա բռնագանձում տարածել և իրացնել այն, այդ թվում՝ Վարկային պարտավորության համապատասխան չափի դիմաց Գրավի առարկան Գրավառուին, կամ Գրավառուի կողմից նշված երրորդ անձին գույքն ի սեփականություն հանձնելու միջոցով, ուղղակի վաճառքի ձևով երրորդ անձին վաճառելու, կամ լիցենզավորված ընկերությունների կողմից կազմակերպվող հրապարակային սակարկություններում այն իրացնելու միջոցով:

8.2. Վարկային պայմանագրով Պարտապանի (Վարկառուի) կողմից ստանձնած պարտավորությունների չկատարման կամ անպատշաճ կատարման դեպքում Գրավառուն Պայմանագրի 10-րդ բաժնում սահմանված կարգով ծանուցում է Գրավատուին և Պարտապանին (Վարկառուին) առանց դատարան դիմելու Գրավի առարկայի բռնագանձման մասին (բռնագանձման ծանուցում): Ընդ որում, Պայմանագրի 10-րդ բաժնում սահմանված կարգով Գրավատուին (Պարտապանին) ծանուցելը համարվում է Գրավատուին (Պարտապանին) բռնագանձման ծանուցման պատշաճ ձևով հանձնում:

Այն դեպքում, երբ Պայմանագրի ուժով գրավի իրավունքը ենթակա է գրանցման (այդ թվում՝ պետական գրանցման), Գրավառուն մինչև Գրավի առարկայի նկատմամբ բռնագանձման գործընթաց սկսելը, ինչպես նաև գրավի բռնագանձման գործընթացը դադարեցնելու կամ ավարտելու դեպքում պատշաճ ձևով ծանուցում է նաև գրանցում իրականացնող մարմնին:

8.3. Բռնագանձման ծանուցումը Գրավատուին և Պարտապանին (Վարկառուին) պատշաճ ձևով հանձնելուց հետո Գրավատուն Գրավառուի առաջին իսկ պահանջով պարտավոր է դադարեցնել Գրավի առարկայի ֆիզիկական օգտագործումը և հանձնել Անշարժ գույքը (իր բոլոր պատկանելիքներով) Գրավառուի տրապետմանը:

8.4. Բռնագանձման ծանուցումը Գրավատուին և Պարտապանին (Վարկառուին) պատշաճ ձևով հանձնելուց երկու ամիս հետո, Գրավառուն ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 249 հոդվածի ուժով և զնելու նախապատվության իրավունքի կանոնները պահպանելով, իրավունք ունի Գրավատուի անունից և նրա հաշվին իրացնելու Գրավի առարկան, այդ թվում այն իրացնել լիցենզավորված ընկերությունների կողմից կազմակերպվող հրապարակային սակարկություններով:

8.4.1. Գրավի առարկան հրապարակային սակարկություններով իրացվում է Գրավառուի նշված անձի (այսուհետ՝ Աճուրդի կազմակերպիչ) կողմից, Աճուրդի կազմակերպիչի սահմանած ընթացակարգով, ՀՀ օրենսդրությամբ և Պայմանագրով սահմանված կարգով: Գրավի առարկան հրապարակային սակարկություններով իրացվում է տվյալ պահին շուկայում գործող ողջամիտ գնով: Սույնով Կողմերը համաձայնվում են, որ շուկայում գործող ողջամիտ գինը համապատասխանում է Գրավի առարկայի հրապարակային սակարկություններով իրացման գնին: Հրապարակային սակարկությունների մեկնարկային գին է սահմանվում իրացման պահի դրությամբ Գրավառուի համար ընդունելի անկախ գնահատողի վեց ամսից պակաս վաղեմություն ունեցող հաշվետվության մեջ բերված Գրավի առարկայի արագ իրացվելի արժեքը: Առաջին 2 (երկու) աճուրդները անց են կացվում դասական կարգով և աճուրդի ընթացքում մեկնարկային գինը չի նվազում: Երրորդ անգամից սկսած աճուրդները անց են կացվում մեկնարկային գնի նվազման (հոլանդական) կարգով: Ընդ որում, հոլանդական կարգով անց կացվող յուրաքանչյուր հաջորդ աճուրդում Գրավի առարկայի մեկնարկային գինը նվազում է նախորդ աճուրդի մեկնարկային գնի 10% (տաս տոկոսի) չափով: Եթե Գրավի առարկա գույքի աճուրդում գտնվելու ժամանակահատվածում կատարվում է գրավով ապահովված Հիմնական պարտավորության ամբողջական մարում, ապա Գրավատուի կողմից

Աճուրդի կազմակերպչին վճարվում է աճուրդ(ներ)ի կազմակերպման և անցկացման հետ կապված ծախսերի հատուցում՝ 100.000 (մեկ հարյուր հազար) ՀՀ դրամի չափով: Գրավի առարկայի իրացման հետ կապված ծախսերը (Աճուրդի կազմակերպչի միջնորդավճարը, գործարքի վավերացման և գրանցման վճարը, գույքի գնահատման վճարը և այլն) կատարվում են Գրավատուի կամ Գրավի առարկայի իրացումից ստացված դրամական միջոցների հաշվին կամ Գրավառուի հաշվին՝ Գրավատուից կատարված ծախսերը փոխհատուցելու պայմանով:

8.5. Գրավատուն անվերապահորեն տալիս է իր համաձայնությունը, որպեսզի Գրավի առարկան առանց դատարան դիմելու բռնագանձելու և իրացնելու նպատակով, Գրավառուն կամ Գրավառուի հանձնարարությամբ մասնագիտացված այլ անձիք հանդիսանան իր գործակալն և ըստ այդմ լիազորում է վերը շարադրյալ անձանց ՀՀ բոլոր նոտարական գրասենյակներում, ՀՀ բոլոր պետական և ոչ պետական հիմնարկներում, իր անունից և իր հաշվին գրել դիմումներ ու տալ հայտարարություններ, ստանալ տեղեկանքներ, արձանագրություններ և այլ փաստաթղթեր, կատարել բոլոր անհրաժեշտ մուծումները, ստորագրել Գրավի առարկա հանդիսացող գույքի առքուվաճառքի, առանց դատարան դիմելու Գրավառուի պահանջները գրավադրված գույքի իրացման հաշվին բավարարելու նպատակով գույքի հանձնման և այլ պայմանագրերում ու համաձայնագրերում, ստանալ գրավադրված գույքի վաճառքից գոյացած դրամական միջոցները և դրանով մարել Վարկային պայմանագրով նախատեսված Վարկի գումարը, տոկոսագումարները, տույժերն ու տուգանքները, այլ վճարները, դատական, նոտարական, պետական գրանցման, գույքի բռնագանձման ու իրացման հետ կապված ծախսերը և կատարել այլ իրավական գործողություններ՝ կապված սույն հանձնարարության հետ:

8.6. Պայմանագրի 8.1 կետով սահմանված Գրավառուի իրավունքը որևէ դեպքում չի զրկում Գրավառուին Հիմնական պարտավորությունը ՀՀ օրենսդրությամբ սահմանված դատական կարգով բռնագանձելու իրավունքից:

9. ՎԵՃԵՐԻ ԼՈՒՃՄԱՆ ԿԱՐԳԸ

9.1. Պայմանագրի կատարման ընթացքում Կողմերի միջև առաջացած բոլոր վեճերը և տարաձայնությունները լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնության չգալու դեպքում վեճը լուծվում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

10. ԾԱՆՈՒՑՄԱՆ ԿԱՐԳԸ

10.1. Կողմերը սահմանում են Պայմանագրով իրենց վերապահված իրավունքների և պարտականությունների իրացման մասին միմյանց ծանուցման հետևյալ կարգը. _____

11. ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ

11.1. Եթե Պայմանագրի որևէ կետ կամ ենթակետ անվավեր, անգործուն, անիրագործելի կամ օրենսդրությանը չհամապատասխանող է ճանաչվում, ապա դա չի ազդում Պայմանագրի մյուս կետերի և ենթակետերի կիրառելիության վրա: Պայմանագրի որևէ կետ կամ ենթակետ անվավեր կամ անիրագործելի ճանաչվելու դեպքում, Կողմերը համաձայն են անմիջապես համատեղ բանակցել բարյացակամության ոգով, փորձելով տվյալ կետը կամ ենթակետը փոխել այնպես, որ այն դառնա կիրառելի և առավել հնարավոր չափով արտացոլի կողմերի սկզբնական նպատակը համապատասխան հարցի կամ հարցերի վերաբերյալ:

11.2. Պայմանագիրը և Պայմանագրում նախատեսած պայմանները ներառում են իրենց մեջ լիակատար համաձայնություն Կողմերի միջև և բոլոր Պայմանագրին նախորդող բանավոր կամ գրավոր պայմանավորվածությունների և պայմանագրերի հանդեպ նախապատվություն ունեն:

11.3. Պայմանագրում նշված Կողմերի ներկայացումները, երաշխիքները և պարտավորությունները վավեր են լինելու Պայմանագիրը ստորագրելու պահից և կգործեն Պայմանագրի գործողության ամբողջ ընթացքում:

11.4. Գրավատուն սույնով տալիս է իր համաձայնությունը, որպեսզի Պայմանագրի գործողության ընթացքում Գրավառուն, առանց Գրավատուին նախապես տեղյակ պահելու կատարի հարցում ՀՀ Կենտրոնական բանկի Վարկային ռեգիստրից և «ԱԶՌԱ Քրեդիտ Ռեփորթինգ» ՓԲԸ-ից և ստանա Գրավատուի վերաբերյալ վարկային զեկույցը:

11.5. Պայմանագիրը կազմված և ստորագրված է 4 (չորս) իրավահավասար օրինակից՝ հայերեն լեզվով, որոնցից մեկական օրինակ տրվում է Կողմերին, մեկ օրինակը մնում է նոտարական գրասենյակում և մեկ օրինակը՝ պետական գրանցող մարմնի համապատասխան ստորաբաժանմանը:

12. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱԿԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ԱՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԳՐԱՎԱՌՈՒ

**ԳՐԱՎԱՏՈՒ
ՊԱՐՏԱՊԱՆ**

Ք. _____Ք
 «ԲԼԵՍՍ» ունիվերսալ վարկային կազմակերպություն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (այսուհետ՝ Վարկատու-Գրավառու), ի դեմս _____, ով գործում է Կանոնադրության հիման վրա, մի կողմից, և

քաղաքացի _____ (այսուհետ՝ Վարկառու-Գրավատու, մյուս կողմից (այսուհետ՝ Կողմեր), կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Պայմանագրի պայմաններին համաձայն Վարկատու-Գրավառուն Վարկառու-Գրավատուին միանվագ կանխիկ տրամադրում է _____ գումարի չափով սպառողական վարկ (այսուհետ՝ Վարկ կամ Հիմնական պարտավորություն), իսկ Վարկառու-Գրավատուն պարտավորվում է վերադարձնել Վարկը, վճարել Վարկի օգտագործման համար տոկոսագումարներն ու այլ վճարները՝ Պայմանագրով սահմանված կարգով, չափով և ժամկետներում:

1.2. Վարկի ամբողջությամբ վերադարձման ամսաթիվն է՝ _____: Վարկի մարման կարգը՝ _____:

1.3. Վարկի վարկային կողմն է՝ _____: Վարկի տրամադրման նպատակով Վարկատու-Գրավառուն սահմանված կարգով բացում է Վարկի հաշվառման անհատական հաշիվ (այսուհետ՝ Վարկային հաշիվ): Վարկի տրամադրման ամսաթիվ է հանդիսանում Վարկատու-Գրավառուի դրամարկղից և/կամ բանկային հաշվից (հաշիվներից) Վարկի գումարի ելքագրման ամսաթիվը: Վարկի, տոկոսագումարների, Պայմանագրով սահմանված այլ վճարումների մարման ամսաթիվ է հանդիսանում վճարային պարտավորությունների կատարման նպատակով Վարկառու-Գրավատուի կամ երրորդ անձի կողմից դրամական միջոցների մուտքագրման ամսաթիվը Վարկատու-Գրավառուի բանկային հաշվին և/կամ դրամարկղ:

1.4. Վարկի տրամադրման համար սահմանվում է միանվագ ծառայության վճար՝ Վարկի վարկային կողմն է՝ _____ ՀՀ դրամի չափով, որը Վարկառու-Գրավատուի կողմից վճարվում է վարկի տրամադրման պահին, Վարկատու-Գրավատուի կողմից կրեդիտավորման հետ կապված այլ վճարներ չեն կատարվում:

1.5. Վարկը տրամադրվում է տարեկան _____ դրույքաչափով (այսուհետ՝ Անվանական տոկոսադրույք), որն մնում է անփափոխ Պայմանագրի գործողության ընթացքում՝ Պայմանագրով սահմանված ժամկետներում և չափով վարկի հետվճարումները կատարելու դեպքում: Վարկի օգտագործման համար տոկոսագումարների հաշվարկը սկսվում է Վարկի տրամադրման օրվանից և կատարվում է Վարկի փաստացի մնացորդի նկատմամբ: Տոկոսագումարները հաշվարկվում են Վարկի փաստացի օգտագործած օրացուցային օրերի համար՝ տարին ընդունելով 365 օր:

1.6. Վարկի տարեկան փաստացի տոկոսադրույքը (հաշվարկված «Սպառողական կրեդիտավորման մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածում նշված բանաձևին համաձայն) կազմում է _____: Վարկի տարեկան փաստացի տոկոսադրույքը ենթակա է փոփոխման, եթե փոփոխվում են Անվանական տոկոսադրույքը և/կամ վարկավորման համար կատարվող այլ վճարները: Վարկի տարեկան փաստացի տոկոսադրույքի փոփոխությունն ուժի մեջ է մտնում Վարկատուի կողմից Վարկառուին այդ մասին ծանուցելու օրվանից 10 (տաս) օրացույցային օր հետո:

1.7. Վարկառու-Գրավատուի կողմից Վարկն ու հաշվարկված տոկոսագումարները վճարվում են հետևյալ չափերով ու ժամկետներում՝

N	Մարման ամսաթիվ	Մարման ենթակա ընդհանուր գումար	Մարման ենթակա մայր գումար	Մարման ենթակա տոկոսագումար
---	----------------	--------------------------------	---------------------------	----------------------------

Եթե Պայմանագրով (Պայմանագրի Հավելվածով) նախատեսված վճարման ամսաթիվը ոչ աշխատանքային օր է, ապա Վարկի գումարի և հաշվարկված տոկոսագումարների մարումը կատարվում է դրան հաջորդող աշխատանքային օրը:

1.8. Հիմնական պարտավորության կատարման ապահովման համար Վարկառու-Գրավատուն գրավ է դնում ոսկյա իրեր, որոնց նկարագրությունը բերվում է Պայմանագրի անբաժանելի մասը հանդիսացող «Ոսկյա իրերի ստուգման և հանձնման-ընդունման ակտ»-ում (այսուհետ՝ Գրավի առարկա): Վարկառու- Գրավատուն երաշխավորում, հայտարարում, հավաստում ու հաստատում է, որ ինքը հանդիսանում է Գրավի առարկայի միակ սեփականատերը, Պայմանագրի կնքման օրվա դրությամբ Գրավի առարկան արգելանքի կամ կալանքի տակ չի գտնվում, վեճի առարկա չէ, ծանրաբեռնված չէ երրորդ անձանց հանդեպ որևէ պարտավորություններով և ազատ է երրորդ անձանց իրավունքներից: Վարկառու-Գրավատուն ընդունում է, որ Գրավի առարկան գնահատվում է զուտ որպես ոսկյա իրերի ջարդոն, այսինքն որպես գրավադրման արժեք ընդունվում է միայն տվյալ իրերում առկա ոսկու պարունակությունը, առանց հաշվի առնելու Գրավի

առարկայի կազմում առկա քարերն ու այլ նյութերը, ուստի այդ մասով ռիսկն ամբողջությամբ ստանձնում է Վարկառու-Գրավատուն: Գրավի առարկայի կորստի կամ վնասվածքի դեպքում Վարկատու-Գրավառուի պատասխանատվությունը սահմանափակվում է «Ոսկյա իրերի ստուգման և հանձնման-ընդունման ակտ»-ում նշված գրավադրման արժեքով:

1.9. Պայմանագրով ապահովվում է Հիմնական պարտավորության պահանջն այն ծավալով, որն առկա է փաստացի բավարարման պահին, այդ թվում Վարկի գումարը, դրա նկատմամբ հաշվարկված տոկոսագումարներն ու սահմանված այլ վճարները, տույժը, պատճառած վնասի հատուցումը, գրավ դրված գույքը պահելու և պահպանելու, բռնագանձելու և իրացնելու հետ կապված ծախսերի հատուցումը:

1.10. Գրավի առարկայի գրավադրման ընդհանուր արժեքը սահմանվել է _____ ՀՀ դրամ: Ընդ որում, Վարկի և գրավի առարկայի գրավադրման արժեք հարաբերակցությունը կազմում է _____: Վարկի և գրավի առարկայի գրավադրման արժեք հարաբերակցությունը կարող է փոփոխվել Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ վերագնահատման արդյունքում գրավի առարկայի գրավադրման արժեքի փոփոխման, գրավի առարկան այլ տեղ գրավադրելու, գրավադրումից ազատելու կամ իրացվելու դեպքում: Գրավի առարկան հանձնվում է Վարկատու-Գրավառուի տիրապետմանը:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱՎԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. Վարկատու-Գրավառուն պարտավորվում է՝ _____

2.3. Վարկառու-Գրավատուն պարտավորվում է՝ _____

2.3.1. Պայմանագրով սահմանված ժամկետում վերադարձնել Վարկը և վճարել դրա օգտագործման համար հաշվարկված տոկոսագումարները:

2.3.2. Գրավոր՝ առձեռն փոխանցմամբ կամ փոստային կապի միջոցով, տեղեկացնել Վարկատու-Գրավառուին իր վավերապայմանների՝ փաստացի բնակության և/կամ հաշվառման հասցե, հեռախոսահամարներ, անձնագիր, անուն, ազգանուն, և այլն, փոփոխության մասին 2 (երկու) աշխատանքային օրվա ընթացքում, ինչպես նաև ներկայացնել այդ փոփոխությունը հիմնավորող փաստաթղթեր:

2.4. Վարկառու-Գրավատուն իրավունք ունի՝

2.4.1. Առանց որևէ պատճառաբանության միակողմանիորեն լուծելու Պայմանագիրը դրա կնքմանը հաջորդող 7(յոթ) աշխատանքային օրվա ընթացքում (մտածելու ժամանակ)՝ վճարելով վարկի օգտագործման համար տոկոսներ, հաշվարկված Պայմանագրի 1.6. կետով սահմանված տարեկան փաստացի տոկոսադրույքով:

2.4.2. Ժամկետից շուտ կատարել (մարել) Պայմանագրով ստանձնած իր վարկային պարտավորությունները, առանց որևէ տույժերի և տուգանքների:

2.4.3. Գրավոր, այդ թվում՝ էլեկտրոնային եղանակով ներկայացված դիմումի հիման վրա, հրաժարվել Պայմանագրից թող պարտադիր ներկայացման տեղեկատվությունը փոստային կապի միջոցով ստանալուց՝ այն կապի այլ միջոցներով կամ Վարկատուի տարածքում ստանալու պայմանով:

2.4.4. Վարկատու-Գրավառուին բողոք պահանջ ներկայացնելուց 10 աշխատանքային օր հետո Վարկատու-Գրավառուի վերջնական գրավոր պատասխանը ստանալու կամ չստանալու դեպքում պահանջ ներկայացնել ֆինանսական համակարգի հաշտարարին «Ֆինանսական հաշտարարի մասին» ՀՀ օրենքին համաձայն:

3. ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԽԱՒՏՈՒՄ

3.1. Պայմանագրով սահմանված ժամկետներում Վարկը, դրա հերթական մասը և/կամ հաշվարկված տոկոսագումարները չմարելու դեպքում, չմարված Վարկի մնացորդը և/կամ հաշվարկված տոկոսագումարները համարվում են ժամկետանց:

3.2. Ժամկետանց Վարկի նկատմամբ դադարում է գործել Պայմանագրի 1.5. կետում նախատեսված տոկոսադրույքը և մինչև ժամկետանց վարկի փաստացի մարումը, դրա մնացորդի նկատմամբ հաշվարկվում են տոկոսներ՝ տարեկան _____ դրույթաչափով:

3.3. Ժամկետանց տոկոսագումարների նկատմամբ սահմանվում է տույժ՝ յուրաքանչյուր ուշացած օրացուցային օրվա համար ժամկետանց տոկոսագումարի _____-ի չափով: Տույժերի հաշվեգրման համար հիմք է ընդունվում է ժամկետանց պարտավորության օրացուցային օրերի փաստացի քանակը:

3.6. Վարկառու-Գրավատուի կողմից Պայմանագրով սահմանված իր վարկային պարտավորությունների չկատարման, անպատշաճ կատարման դեպքում Վարկատու-Գրավառուն առավելագույնը 8/ութ/ աշխատանքային օր հետո Վարկառու-Գրավատուի տվյալները (վարկային պարտավորությունների չկատարման, անպատշաճ կատարման մասին տեղեկությունները) ուղարկում է Վարկային բյուրո:

4. ԳՐԱՎԻ ԱՌԱՐԿԱՅԻ ԻՐԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1. Կողմերը սահմանում են, որ Վարկառու-Գրավատուի կողմից Պայմանագրով ստանձնած պարտավորությունների չկատարման կամ անպատշաճ կատարման դեպքում Վարկառու-Գրավատուն տալիս է իր համաձայնությունը և իրավունք է վերապահում Վարկատու-Գրավառուին առանց դատարան դիմելու իրացնել Գրավի առարկան և ստացված միջոցներն ուղղել Վարկառու-Գրավատուի պարտավորությունների մարմանը:

4.2. Պայմանագրով Վարկառու-Գրավատուի կողմից ստանձնած պարտավորությունների չկատարման կամ անպատշաճ կատարման դեպքում Վարկատու-Գրավառուն պատշաճ ձևով, ծանուցում է Վարկառու-Գրավատուին առանց դատարան դիմելու Գրավի առարկայի բռնագանձման մասին (բռնագանձման

ծանուցում): Ընդ որում, Պայմանագրի 5.5 կետում սահմանված կարգով Վարկառու-Գրավատուին ծանուցելը համարվում է Վարկառու-Գրավատուին բռնազանձման ծանուցման պատշաճ ձևով հանձնում:

4.3. Բռնազանձման ծանուցումը Վարկառու-Գրավատուին պատշաճ ձևով հանձնելուց 2 (երկու) ամիս հետո, Վարկատու-Գրավառուն իրավունք ունի իրացնել Գրավի առարկան՝ լիցենզավորված ընկերությունների կողմից կազմակերպվող հրապարակային սակարկություններով:

4.4. Գրավի առարկան հրապարակային սակարկություններով իրացվում է Վարկատու-Գրավառուի նշված անձի (Աճուրդի կազմակերպիչ) կողմից, Պայմանագրով և Աճուրդի կազմակերպիչի կողմից սահմանված ընթացակարգով՝ տվյալ պահին շուկայում գործող ողջամիտ գնով: Սույնով Կողմերը համաձայնվում են, որ շուկայում գործող ողջամիտ գինը համապատասխանում է Գրավի առարկայի հրապարակային սակարկություններով իրացման գնին: Հրապարակային սակարկությունների մեկնարկային գին է սահմանվում Գրավի առարկայի գրավադրման արժեքը: Առաջին 2 (երկու) աճուրդները անց են կացվում դասական կարգով և աճուրդի ընթացքում մեկնարկային գինը չի նվազում: Երրորդ անգամից սկսած աճուրդները անց են կացվում մեկնարկային գնի նվազման (հոլանդական) կարգով: Ընդ որում, հոլանդական կարգով անց կացվող յուրաքանչյուր հաջորդ աճուրդում Գրավի առարկայի մեկնարկային գինը նվազում է նախորդ աճուրդի մեկնարկային գնի 10% (տաս տոկոսի) չափով: Աճուրդի կազմակերպիչի միջնորդավճարը վճարվում է Գրավի առարկայի իրացումից ստացված գումարից՝ Աճուրդի կազմակերպիչի կողմից գործարքի վկայականում նշված գումարի չափով:

4.5. Պայմանագրի 4.1 կետով սահմանված Վարկատու-Գրավառուի իրավունքը որևէ դեպքում չի զրկում Վարկատու-Գրավառուին Հիմնական պարտավորությունը դատական կարգով բռնազանձելու նպատակով հայցադիմում ներկայացնելու իրավունքից:

5. ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ

5.1. Պայմանագիրը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է մինչև դրանով նախատեսված պարտավորությունների ամբողջական կատարումը:

5.2. Պայմանագրում լրացումները և փոփոխությունները կատարվում են Կողմերի համաձայնությամբ՝ գրավոր ձևով:

5.3. Պայմանագրի կատարման ընթացքում Կողմերի միջև առաջացած բոլոր վեճերը և տարաձայնությունները լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնության չգալու դեպքում վեճը լուծվում է ֆինանսական համակարգի հաշտարարի միջոցով՝ «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» ՀՀ օրենքին համապատասխան կամ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դատական կարգով: Ընդ որում, Պայմանագրի կնքման օրվա դրությամբ Վարկատուն Ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումները վիճարկելու իրավունքից հրաժարվելու վերաբերյալ համաձայնագիր չի կնքել:

5.4. «Սպառողական կրեդիտավորման մասին» ՀՀ օրենքի համաձայն, Վարկատու-Գրավառուի և Վարկառու-Գրավատուի միջև ցանկացած հաղորդակցում, որը կապված է Պայմանագրի պայմանների կամ Կողմերի միջև հաղորդակցման կարգի կամ Կողմերի իրավունքների, պարտականությունների կամ պատասխանատվության սահմանման, փոփոխման կամ դադարեցման հետ կամ վերաբերում է Պայմանագրի վրա որևէ ազդեցություն ունեցող օրենքներին, նորմատիվ իրավական ակտերին կամ Վարկատու-Գրավառուի ներքին ակտերին (այսուհետ՝ պարտադիր ներկայացման տեղեկատվություն) կատարվում է գրավոր եղանակով՝ փոստային կապի միջոցով կամ Վարկառու-Գրավատուի նախընտրած այլ եղանակներով, այդ թվում՝ Վարկատու-Գրավառուի տարածքում առձեռն, էլեկտրոնային կամ կապի այլ միջոցներով ստանալու միջոցով:

5.5. ԾԱՆՈՒՑՄԱՆ ԿԱՐԳԸ

Կողմերը սահմանում են Պայմանագրով իրենց վերապահված իրավունքների և պարտականությունների իրացման մասին միմյանց ծանուցման հետևյալ կարգը. _____

5.6. Եթե Պայմանագրի որևէ կետ անվավեր, անգործուն, անիրագործելի կամ օրենսդրությանը չհամապատասխանող է ճանաչվում, ապա դա չի ազդում Պայմանագրի մյուս կետերի կիրառելիության վրա:

5.7. Վարկառու-Գրավատուն սույնով տալիս է իր համաձայնությունը, որպեսզի Պայմանագրից ծագող կամ ծագելիք իր պարտավորությունների վերաբերյալ ցանկացած տեղեկատվություն Վարկատու-Գրավառուն, առանց Վարկառու-Գրավատուի լրացուցիչ համաձայնության, տրամադրի ՀՀ Կենտրոնական բանկի Վարկային ռեգիստրին և «ԱԶՌԱ Քրեդիտ Ռեփորթինգ» ՓԲԸ-ին, ինչպես նաև Պայմանագրի գործողության ընթացքում առանց Վարկառուի-Գրավատուին նախապես տեղյակ պահելու կատարի հարցում ՀՀ Կենտրոնական բանկի Վարկային ռեգիստրից և «ԱԶՌԱ Քրեդիտ Ռեփորթինգ» ՓԲԸ-ից և ստանա Վարկառու-Գրավատուի վերաբերյալ վարկային զեկույցը:

5.8. Վարկառու-Գրավատուն սույնով հայտարարում և հավաստիացնում է, որ ծանոթ է Պայմանագրի կնքման օրվա դրությամբ գործող Վարկատուի _____ վարկատեսակի պայմաններին (իրապարակվում են _____):

5.9. Պայմանագիրը կազմված և ստորագրված է 2 (երկու) իրավահավասար օրինակներից՝ հայերեն լեզվով, Կողմերից յուրաքանչյուրին տրվում է մեկ օրինակ:

6. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ՎԱԿԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ԱՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՎԱՐԿԱՏՈՒ-ԳՐԱՎԱՌՈՒ

ՎԱՐԿԱՌՈՒ-ԳՐԱՎԱՏՈՒ

Ե Ր Ա Շ Խ Ա Վ Ո Ր ՈՒ Թ Յ Ա Ն Պ Ա Յ Մ Ա Ն Ա Գ Ի Ր Ն

Ք

_____Ք

«ԲԼԵՍՍ» ունիվերսալ վարկային կազմակերպությունը (այսուհետ՝ Պարտատեր), ի դեմս _____, ով գործում է Կանոնադրության հիման վրա, մի կողմից, և քաղաքացի _____ (այսուհետ՝ Երաշխավոր), և քաղաքացի _____ (այսուհետ՝ Պարտապան), մյուս կողմից (այսուհետ՝ Կողմեր), կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Երաշխավորը պարտավորվում է սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքով և դրամական միջոցներով պատասխանատվություն կրել Պարտատիրոջ առջև՝ Պարտատիրոջ և Պարտապանի միջև _____-ին կնքված թիվ _____ վարկային պայմանագրով (այսուհետ՝ Վարկային պայմանագիր), Պարտապանի կողմից իր պարտավորությունը լրիվ կամ մասնակի կատարելու համար (այսուհետ՝ Երաշխավորություն):

1.2. Վարկային պայմանագրով Պարտատերը տրամադրել է Պարտապանին _____ ՀՀ դրամ գումարի չափով վարկ, մինչև _____ ամբողջությամբ վերադարձման ժամկետով, տարեկան _____ դրույքաչափով: Վարկառուի կողմից վարկը վերադարձվում է վարկային պայմանագրում սահմանված չափով (այսուհետ՝ Հիմնական պարտավորություն):

1.3. Պայմանագրով Երաշխավորի ստանձնած պարտավորությունն անվերապահ է և Երաշխավորը չի կարող հրաժարվել դրա կատարումից, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. Կողմերի Պայմանագրից բխող հարաբերությունները կարգավորվում, իսկ Կողմերի իրավունքները և պարտականությունները որոշվում են ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 24 գլխի 4-րդ պարագրաֆում /Երաշխավորություն/ նախատեսված կանոններով, եթե այլ բան նախատեսված չէ Պայմանագրով:

2.2. Երաշխավորը պարտավոր է՝ _____

2.3. Երաշխավորը իրավունք ունի՝ _____

2.4. Պարտատերը պարտավոր է՝ _____

2.5. Պարտատերն իրավունք ունի՝ _____

2.6. Պարտապանը պարտավոր է՝ _____

2.7. Պարտապանն իրավունք ունի՝ _____

3. ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԽԱՒՏՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ

3.1. Պարտապանի կողմից Հիմնական պարտավորությունը խախտելու դեպքում Երաշխավորը և Պարտապանը Պարտատիրոջ առջև կրում են համապարտ պատասխանատվություն սեփականության իրավունքով իրենց պատկանող ամբողջ գույքով:

3.2. Պայմանագրով ստանձնած պարտավորությունները խախտելու դեպքում Երաշխավորը Պարտատիրոջ առջև պատասխանատվություն է կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

3.3. Երաշխավորի կողմից Պայմանագրով ստանձնած իր պարտավորությունների չկատարումը կամ անպատշաճ կատարումը հիմք է՝ Պարտատիրոջ կողմից Պարտապանին Հիմնական պարտավորության վաղաժամկետ ամբողջական մարման մասին պահանջ ներկայացնելու համար:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ

4.1. Պայմանագիրը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է մինչև դրանով և Վարկային պայմանագրով նախատեսված պարտավորությունների ամբողջական կատարումը:

5. ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼԸ

5.1. Պայմանագրում լրացումները և փոփոխությունները կատարվում են Կողմերի համաձայնությամբ (բացառությամբ Պայմանագրով նախատեսված դեպքերի)՝ գրավոր ձևով, որոնք Կողմերի ստորագրման պահից կհամարվեն Պայմանագրի անբաժանելի մասը:

6. ԱՆՀԱՂԹԱՅԱՐԵԼԻ ՈՒԺ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ ՄԱԺՈՐ)

6.1. Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության արդյունք, որը ծագել է Պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել և որը ենթակա չէ Կողմերի հսկողությանը: Պայմանագրի իմաստով անհաղթահարելի ուժ չեն համարվում գործադուլները, պարտավորությունների խախտումը Կողմերի գործընկերների (կոնտրագենտների) կողմից, դրամական միջոցների բացակայությունը և այն հանգամանքները, որոնք խախտող Կողմը կարող էր վերացնել ձեռնարկելով անհրաժեշտ միջոցներ:

6.2. Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է երեք ամսից ավելի (կամ երբ ակնհայտ է դառնում, որ նման իրավիճակը կամ դրա հետևանքները կշարունակվեն երեք ամսից ավելի), ապա Կողմերը պետք է անմիջապես բանակցություններ սկսեն անհաղթահարելի ուժի ազդեցության տակ հայտնված Կողմի համար հնարավոր ելք գտնելու նպատակով, ինչը վերջինիս թույլ կտա կատարել սույն Պայմանագրի ներքո ստանձնած իր պարտավորությունները:

7. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ

7.1. Պայմանագրի կատարման ընթացքում Կողմերի միջև առաջացած բոլոր վեճերը և տարաձայնությունները լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնության չգալու դեպքում վեճը լուծվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

8. ԾԱՆՈՒՑՄԱՆ ԿԱՐԳԸ

8.1. Կողմերը սահմանում են Պայմանագրով իրենց վերապահված իրավունքների և պարտականությունների իրացման մասին միմյանց ծանուցման հետևյալ կարգը. _____

9. ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ

9.1. Եթե Պայմանագրի որևէ կետ կամ ենթակետ անվավեր, անգործուն, անիրագործելի կամ օրենսդրությանը չհամապատասխանող է ճանաչվում, ապա դա չի ազդում Պայմանագրի մյուս կետերի կամ ենթակետերի կիրառելիության վրա: Պայմանագրի որևէ կետ կամ ենթակետ անվավեր կամ անիրագործելի ճանաչվելու դեպքում, Կողմերը համաձայն են անմիջապես համատեղ բանակցել բարյացակամության ոգով, փորձելով տվյալ կետը կամ ենթակետը փոխել այնպես, որ այն դառնա կիրառելի և առավել հնարավոր չափով արտացոլի կողմերի սկզբնական նպատակը համապատասխան հարցի կամ հարցերի վերաբերյալ:

9.2. Պայմանագիրը և Պայմանագրում նախատեսած պայմանները ներառում են իրենց մեջ լիակատար համաձայնություն Կողմերի միջև և բոլոր Պայմանագրին նախորդող բանավոր կամ գրավոր պայմանավորվածությունների և պայմանագրերի հանդեպ նախապատվություն ունեն:

9.3. Պայմանագրում նշված Կողմերի ներկայացումները, երաշխիքները և պարտավորությունները վավեր են լինելու Պայմանագիրը ստորագրելու պահից և կգործեն Պայմանագրի գործողության ամբողջ ընթացքում:

9.4. Երաշխավորը սույնով տալիս է իր համաձայնությունը, որպեսզի Պայմանագրից ծագող կամ ծագելիք իր պարտավորությունների վերաբերյալ ցանկացած տեղեկատվություն Պարտատերը, առանց Երաշխավորի լրացուցիչ համաձայնության, տրամադրի ՀՀ Կենտրոնական բանկի Վարկային ռեգիստրին և «ԱՔՌԱ Քրեդիտ Ռեփորթինգ» ՓԲԸ-ին, ինչպես նաև Պայմանագրի գործողության ընթացքում առանց Երաշխավորին նախապես տեղյակ պահելու կատարի հարցում ՀՀ Կենտրոնական բանկի Վարկային ռեգիստրից և «ԱՔՌԱ Քրեդիտ Ռեփորթինգ» ՓԲԸ-ից և ստանա Երաշխավորի վերաբերյալ վարկային զեկույցը:

9.5. Պայմանագիրը կազմված և ստորագրված է 3 (երեք) իրավահավասար օրինակից՝ հայերեն լեզվով, յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկ օրինակ: Երաշխավորին տրամադրվում է նաև Վարկային պայմանագրի մեկ օրինակ:

Ես՝ _____

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՐՏԱՏԵՐ

ԵՐԱՇԽԱՎՈՐ
ՊԱՐՏԱՊԱՆ